

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔՈՒՄ

ՀԱՅԿԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ (haykaramhakobyan@mail.ru)

ՄՈՒՏՔ

Իրաքանչիւր ոք, որ գէթ մէկ անգամ ներկայ է եղել Վազգէն Ա. ամէնայն հայոց կաթողիկոսի քարոզին, զգացել է նրա խօսքի զօրութիւնը եւ խորը ներգործութիւնը լսարանի վրայ: Հետաքրքրական է, թէ ո՛րն էր Վազգէն Ա.ի քարոզխօսութեան հզօր ազդեցութեան գաղտնիքը: Հարցի պատասխանը գտնելու համար կարիք է զգացում ուսումնասիրել հայրապետի խօսքը ընդհանուր հռետորութեան համապատկերում եւ տեսնել, թէ ինչպիսի՛ միջոցների կիրառմամբ էր բնատրութեամբ եւ առօրեայ խօսակցութեամբ հանդարտաբարոյ հայրապետի հանրային խօսքը դառնում այդպէս հզօր:

Վազգէն Ա.ի խօսքի ուսումնասիրութիւնը կարելի է, որովհետեւ նա խորհրդային շրջանից Հայաստանի Գ. Հանրապետութեան պատմական անցումային փուլում գործած ու հռետորական տաղանդով եւ ունակութիւններով օժտուած հայ ազգի նշանաւոր այն գաւակներից էր, ում խօսքը ոչ միայն գեղագիտական արժէք էր պարունակում այլեւ ունէր ազդրութիւն: Յօդուածում նեկայացրել ենք եկեղեցական տօնակատարութիւնների, խոկումների, Ամանորի, Արցախի թեմի վերաբացման եւ համազգային նշանակութեան խնդիրների, յատկապէս արցախեան շարժման առնչուող Վազգէն Ա.ի ելոյթներում նկատելի հռետորական միջոցների արհեստավարժ կիրառութիւնը: Քննում է Վազգէն Ա.ի կեանքի եւ գործունէութեան ներդաշնակութիւնը իր քարոզխօսութեան հետ: Հռետորական եւ հոգեբանական տեսանկիւններից զատ, ելոյթները դիտարկում են նաեւ հայաստանեան պատմական նշանակութեան իրադարձութիւնների զարգացման լոյսի ներքոյ: Վեհափառի ելոյթները խօսուն օրինակ են, թէ ինչպէս են հռետորական միջոցներն ի սպաս դրում հաւատի, հայրենիքի եւ ազգային ինքնագիտակցութեան զօրացման համար: Հայրենանուէր այդ գործունէութեան համար ուրոյն դեր էին կատարում նաեւ նրա հռետորական ունակութիւնները:

ԷԹՈՍԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Վազգէն Ա.ի ելոյթներում կարելի էր էթոսի դերը: Էթոսը յունարէն *ήθος* բառն է, որ նշանակում է բնատրութիւն, բարք եւ ներկայացնում է ելոյթ ունեցողի վստահելիութիւնը¹: Այն հռետորական խօսքի համապատասխանութիւնն է ունկնդիրների բարոյական սպասելիքներին², որը ներկայաց-

¹ P. Turpin, *The Moral Rhetoric of Political Economy. Justice and Modern Economic Thought*, London, Routledge, 2011, էջ 14:

² К. Т. Борисовна, *Педагогическая риторика* (Մանկավարժական հռետորութիւն), Կոնսէլի, Մոսկուա, 2003, էջ 13:

նում է հոռետորի ընդհանուր որակները, օրինակ՝ հանգստությունը, անկեղծությունը եւ ամբողջական բնականությունը³։ Ըստ Արիստոտելի՝ էթոսը կապուած է մարդու բարոյական տիպի կամ բնաւորութեան այն մասի հետ, որը ձեւաւորում է սովորոյթների եւ աւանդոյթների միջոցով⁴։

Յայտնի հոգեբան Էրիք Ֆրոմի խօսքով՝ «Գաղափարները իրենք իրենցով մարդկանց վրայ խոր ազդեցութիւն չեն թողնում, երբ դրանք մատուցւում են որպէս չոր մտքեր։ ... գաղափարները մարդկանց հոգեբանութեան վրայ խորապէս ազդում են այն ժամանակ, երբ գաղափար արտայայտողը ապրում է դրանցով»⁵։ Այդպէս էր գործում Վազգէն Ա. վեհափառը։ Նրա գաղափարները կարծես ձուլուած լինէին իր անձի հետ։ Նրա խօսքի, գործի եւ անձի միութեան վկան յատկապէս Խորհրդային Միութեան անկման շրջանում նրա ձեռնարկած քայլերն էին։ Այդ շրջանում, երբ անկում էր ապրում Հայաստանի տնտեսութիւնը մեծ հայրապետն իրեն չէր խնայում օգնութեան միջոցներ հայթայթելով եւ մտահոգուելով իր հայրենակիցների խնդիրներով։ Վեհափառը ամէն կերպ միխթարում էր ժողովրդին, յուսադրում եւ տալիս խորհուրդներ՝ այդ իրադրութիւնից դուրս գալու համար։

1991 Դեկտեմբերի 31ի գիշերը ժողովրդին գօտեպնդելու համար վեհափառը իր կեանքից ներկայացնում է մի փոքր պատմութիւն. «Մենք 1916ի ձմռանը հասանք Օդեսա։ Խստաշունչ ձմեռ էր։ «Սիրիերեան ձմեռ է», - ասում էր մայրս։ Եւ, յիշում եմ, մի փոքրիկ սենեակ ճարեցինք Օդեսայի ծայրամասերում։ Մենք մէկ սենեակի մէջ էինք. ո՛չ էլեկտրական լոյս կար, ո՛չ ջեռուցում։ Աւանդաբար Կաղանդի գիշերը, գոնէ մեր կողմերում, ըստ իմ ծնողների սեղանի վրայ ամենաքիչը եօթ տեսակ կերակուր պէտք է լինի։ Մայրս ջանք էր թափում, որ եօթ տեսակ լինի, վերջապէս եօթ տեսակ եղաւ՝ հաշուած ջուրն ու հացը եւ այն փոքրիկ թխուածքի նման բանը, որը ռուս դրացին տուել էր՝ գիտենալով, որ մենք չքաւոր մարդիկ ենք...»⁶։ Վեհափառը դրանից յետոյ իր կեանքի այդ դրուագի եւ ժամանակի ծանր պայմանների միջեւ զուգահեռ է անցկացնում՝ ցոյց տալով դրանց նմանութիւնը։ Պատմութեան վերջում վեհափառը ասում է, որ իրենք այն ժամանակ ո՛չ ուրախացել, ո՛չ էլ տխրել են, այլ փառք են տուել Աստծուն ապահովութեան, խաղաղութեան եւ հանապազօրեայ հացի համար։ Ահա այս պատմութեամբ վե-

³ С. Кови, Д. Колосимо, *Карьерное преимущество. Практические рекомендации* (Մասնագիտական առաւելութիւն. գործնական խորհուրդներ), Ալպինա հրատ., Մոսկուա, 2012, էջ 70։

⁴ Аристотел, *Поэтика* (Արիստոտել, Պոետիկա), Ազբուկա հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 99։

⁵ Р. С. Хеклер, *Додзе лидерства. Фундамент успеха в карьере и в жизни* (Առաջնորդութեան ճանապարհ, մասնագիտութիւնում եւ կեանքում յաջողութեան հիմք), Վէս հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2010, էջ 31։

⁶ Վազգէն Ա. *Կարողիկոս ամէնայն հայոց. նուիրում է մահուան 10րդ փարեյիցին*, Ս. Էջմիածին, 2005, էջ 23։

հափառը ցոյց էր տալիս, որ ինքը նրանցից մէկն է, ով քաջ ծանօթ է առկա խնդիրներին, իր սեփական անձի վրայ զգացել է այդ ողջ ծանրութիւնը, բայցեւայնպէս չի ընկրկել, այլ մխիթարուել է նրանով ինչ որ ունեցել է, եւ ձեռք է բերել ուրիշներին քաջալերելու կարողութիւն:

Ելոյթում էթոսի կիրառութեան պայմանները վերաբերում են տեղին եւ ժամանակին, որոնցով էլ որոշուում է խօսքի բովանդակութեան մի մասը: Թեմայի եւ առանձին բառերի ընտրութիւնը կազմում են խօսքի ծրագրի մէկ այլ մասը: Միջավայրին չհամապատասխանող խօսքը նոյնիսկ ուժեղ փաստարկման դէպքում կարող է չընդունուել լսարանից: Խօսքի թեմա ընտրելու համար պէտք է անպայման հաշուի առնել ժամանակը, պայմանները, տեղը եւ լսարանը, այսինքն, թէ ում առջեւ ենք պատրաստուում ելոյթ ունենալ:

Վազգէն Ա.ի քարոզները համապատասխանում էին էթոսի վերոնշեալ պայմաններին: Այդպիսի մի օրինակի ենք հանդիպում արցախեան շարժման ժամանակ մայր տաճարում հնչած վեհափառի քարոզում. «*Մանաւանդ այս օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը հերոսական մարտ է մղում ընդդէմ մահուան, ընդդէմ անիրաւութեան եւ ընդդէմ մեղապարտ ուժերի: Մեր հոգիները, մեր գիտակցութիւնը վկայում են, թէ Արցախի մեր եղբայրների եւ քոյրերի մարտը յանուն ազաւորութեան եւ արդարութեան, մահուամբ մահը յաղթելու եւ նոր կեանք նուաճելու սխրանք է աստուածապօր»⁷: Այս խօսքում տեսնում ենք, թէ վեհափառն իր քարոզն ինչպէս է հմտօրէն համապատասխանեցնում երկրում տիրող իրավիճակին (ժամանակային պայման): Քարոզի թեման (թեմայի պայման) մայր տաճարում (տեղի պայման) հաւաքուած հայորդիների (լսարանի պայման) սիրտը յուզող խնդիրն էր, իսկ հայորդիների մղած պայքարը, վեհափառի դիպուկ բնորոշումով անուանում է աստուածատուր սխրանք (առանձին բառերի ընտրութեան պայման):*

ՊԱԹՈՍԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Վազգէն Ա.ի խօսքում մեծապէս զգացուում է նաեւ *պաթոսի* դերը, եթէ էթոսի միջոցով ամրապնդում էր իր վստահելիութիւնը, ապա պաթոսի միջոցով նա ուղղակիօրէն դիմում էր լսարանի զգացումներին: Պաթոսը ծագում է հունարէն *πάθος* բառից, այն ազդելով ունկնդիրների զգացական եւ երեակայական կողմի վրայ, յանգեցնում է նրանց այն տեսակէտին, որին հակուած է ելոյթ ունեցողը⁸: Յարաբերութեան այդ միջոցը յաճախ է օգտագործուում հռետորութեան մէջ եւ համարուում է համոզման երեք ձեւերից մէկը էթոսի եւ *լոգոսի* կողքին: Շատ հռետորների պարագայում պաթոսը սեփական զգացմունքային վիճակը չէ, այլ պարզապէս օգտագործուող խօսքի միջոց, որը ստեղծելով զգացմունքային պատկեր ազդում է լսարանի

⁷Քարոզի նիւթը քաղել ենք Շողակաթ հեռուստաընկերութեան պատրաստած «Վազգէն Ա. ամէնայն հայոց կաթողիկոս» վերնագրով տեսանիւթից:

⁸ M. Penny, *Political Pathos*, Bloomington, 2010, էջ 12:

վրայ: Վեհափառի խօսքում եւս կայ զգացմունքայնութիւն, թախիժ, տառապանք, ելոյթներում առկայ յոյզերը իր կեանքի մի մասն էին կազմում եւ ոչ թէ յօրինուած էին ցուցադրութեան համար: Վազգէն Ա.ի օրինակը իրօք համապատասխանում էր իր ժամանակի լաւագոյնն հռետորներից մէկի՝ Օգոստինոս Երանելու հետեւեալ խօսքին. «Առաջին հերթին քո մէջ պէտք է վառուի այն կրակը, որը ցանկանում ես վառել ուրիշների մէջ»⁹: Վեհափառի պարագայում պաթօսը իր վերաբերմունքի ու գնահատականի ներկայացումն էր խօսքի առարկայի վերաբերեալ:

Գոյութիւն ունի պաթօսի երեք տեսակ՝ գերզգացմունքային, երազողական եւ իրատեսական: Գերզգացմունքային պաթօսը ստեղծում է խօսքի առարկայի հետ բախումով եւ դրա գնահատմամբ: Երազողական պաթօսի դէպքում խօսքի առարկան շեղում է իրականութիւնից եւ համեմատում կատարեալի հետ: Իրատեսական պաթօսը հանդէս է գալիս որպէս հանգամանքների հարկադրական ուժ: Իրատեսական պաթօսը դառնում է կատարելագործման եւ արուեստի հզօր գործիք, երբ հոգեւոր աշխարհն ու մարդկային բարոյականութիւնը եւս ընդունում են որպէս իրականութիւն: Իրատեսական պաթօսի օրինակ է 1988 Յուլիսի 5ի Երեւանի օդանաւակայանի դրամատիկ դէպքերից¹⁰ յետոյ Վազգէն Ա.ի հեռուստատեսային ելոյթը, երբ նա անսովոր յուզուած դիմել էր ժողովրդին ասելով. «անհեռափեսօրէն ընդվզել Ռուսաստանի դէմ, դուրս գալ ասիերից եւ ընկնել վնասակար ծայրայեղութիւնների մէջ, «նշանակում է Հայաստանը սկուրեղի վրայ յանձնել թշնամուն»»¹¹: 1988ից սկսուած արցախեան շարժումը այնպիսի ծաւալ էր ընդունել, որ խոհեմութեան ու զսպուածութեան չափանիշ համարուող վեհափառը, հրճուանքի փոխարէն համակուել էր տագնապով: Պատասխանատւութիւն զգալով իր ժողովրդի անվտանգութեան հանդէպ, նա շարժումը ողջունելու փոխարէն զգուշութեան ու խոհեմութեան կոչ էր անում, որովհետեւ թերեւս ոչ ոք, բացի Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդից, այդ-

⁹ В. Ментцель, *Риторика. Искусство говорить свободно и убедительно* (Հռետորութիւն. ազատ եւ համոզիչ խօսելու արուեստ), Օմեգա-Լ հրատ., Մոսկուա, 2015, էջ 18:

¹⁰ Նշուած իրադարձութիւնների պատճառը Կոմունիստական Կուսակցութեան ԺԹ. համագումարում Լեոնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի պահանջների մերժումն էր: Դրա հետեւանքով նոր թափ էր ստացել համազգային շարժումը, ինչը ճնշելու նպատակով Երեւան էին ուղարկուել Խորհրդային զօրքեր: Յուցարարների եւ զօրքի միջեւ բախումը տեղի է ունեցել Զուարթնոց օդանաւակայանի մօտ, զոհուել է 1 եւ վիրաւորուել 36 մարդ (M. R. Beissinger, *Nationalist Mobilization and the Collapse of the Soviet State*, Cambridge University Press, 2009, էջ 187. նաեւ՝ **A. Cohen**, *Russian Imperialism. Development and Crisis*, London, Praeger, 1996, էջ 135. նաեւ՝ «Երթ դէպի Զուարթնոց», *Հայկական ժամանակ օրաթերթ*, <https://web.archive.org/web/20160306080851/http://armtimes.com/hy/read/49203>):

¹¹ Ա. Մադոյեան, *Ապրել գալիքի փեսիլքով*, Ս. Էջմիածին, 2008, էջ 239-40:

քան լաւ չէր գիտակցում, թէ ի՞նչ ուժ է կանգնած ազատութիւն եւ իրաւունք պահանջող ժողովրդի դէմ եւ հարկ էր համարում իրականութեան այդ խորը զգացումը պաթոսի միջոցով փոխանցել ժողովրդին:

ԴԱԴԱՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Բաւականին տպաւորիչ եւ իւրօրինակ էին Վազգէն Ա.ի ելոյթներում կիրառուած դադարները¹²: Դադարը ունի յստակ նշանակութիւն եւ փորձառու հռետորի ձեռքում հրաշալի հնարք է, որը յատուկ ուժ է հաղորդում խօսքին¹³, ձերբազատում է այն միապաղաղութիւնից եւ դարձնում աւելի լսելի¹⁴: Այն օգնում է լսարանին աւելի լաւ ըմբռնել մեր ասելիքը, քանի որ մենք խօսում ենք եօթ կամ ութ անգամ աւելի արագ, քան մեր ունկնդիրները մշակում են տեղեկութիւնը¹⁵: Ելոյթի ժամանակ յաջող դադարի կիրառութեան համար բաւական չէ միայն լռելը «*պէտք է այն կառուցել ձայնային ելեւէջի պարկերով, շարժումով, ժեստով եւ հայեացքով, որոնք բոլորը միասին ձեւաւորում են պահանջուած դադարը*»¹⁶: Բաւականին կարելու է նաեւ դադարի կիրառութիւնը մինչեւ խօսքի սկսելը, հրափրելով լսարանի ուշադրութիւնը եւ զարգացնելով նրանց մօտ սպասումը:

Վազգէն կաթողիկոսը ելոյթի ժամանակ ժողովրդի առաջ կանգնում էր հանգիստ, հաւասարակշռուած եւ վստահ ու իր ներքին խաղաղութեամբ համակում էր բոլոր ներկաներին: Դադարի ժամանակ վեհափառի միայն կերպարը բաւական էր լսարանին դէպի ինքը կենտրոնացնելու համար: Վազգէն Ա.ը, ինչպէս Սիլվա Կապուտիկեանն է գրում իր յուշերում, «*առանձնանում էր իր յաւելեալ լրջախոհութեամբ, իր կոչմանն ու դիրքին համապատասխանող առաքինի արտաքինով*»¹⁷: Հրանդ Մաթեոսեանի նկա-

¹² Դադարը ծագում է լատիներէն՝ *pausa* բառից, որը նշանակում է «դադարեցում, կանգառ»: Այն հնչումի ժամանակաւոր ընդհատում, ընդմիջարկ է, որի ընթացքում ձայնային օրգանները ընկալւումով չեն արտաբերում եւ դա խզում է խօսքի հեղեղը (В. И. Ахманова, *Словарь лингвистических терминов*, (Լեզուաբանական եզրերի բառարան), Ռիպուլկասիկ հրատ., Մոսկուա, 1966, էջ 311:

¹³ U. Lenker, *Argument and Rhetoric. Adverbial Connectors in the History of English*, New York, De Gruyter Mouton Pub., 2010, էջ 32:

¹⁴ О. В. Бондаренко, *История русской дипломатической риторики* (Ռուս դիւանագիտական հռետորութեան պատմութիւն), ՎոլԳՈ հրատ., Վոլգոգրադ, 2004, էջ 145. նաեւ՝ Н. Зверева, *Я говорю меня слушают. Уроки практической риторики* (Ես խօսում եմ ինձ լսում են. գործնական հռետորութեան դասեր), Ալպինա հրատ., Մոսկուա, 2012, էջ 32:

¹⁵ К. Бредемайер, *Правила риторики. Как не теряться во время выступления и быть убедительным* (Հռետորութեան կանոններ, ինչպէս չլրուել ելոյթի ժամանակ եւ լինել համոզիչ), Ալպինա հրատ., Մոսկուա, 2007, էջ 18:

¹⁶ С. Шипунов, *Харизматичный оратор* (Խարիզմատիկ հռետոր), Հռետորութեան եւ բանաւոր խօսքի վարպետութեան համալսարան հրատ., Մոսկուա, էջ 129:

¹⁷ Մադոյեան, էջ 222:

րագրութեամբ՝ կաթողիկոսի ներկայութիւնը սաստող էր¹⁸: Նրա բարձր հայեացքը, փառաւոր մօրութիւնը, վսեմ ճակատը եւ իմաստուն աչքերը չափազանց ազդեցիկ էին: Վեհափառը, մինչ խօսքը սկսելը, հայեացքն ուղղում էր բոլոր ներկաներին, խորը շունչ էր քաշում եւ արտայայտիչ, պարզ ու բարձր ձայնով հնչեցնում էր առաջին նախադասութիւնը:

Դադարը խօսքի ժամանակ այնպիսի տպաւորութիւն է թողնում, ինչպէս չսպասուած ձայնը լռութեան մէջ: Իմանուել Կանտը այն ներկայացնում էր որպէս «*րոպէական զսպում էական ուժի, որը փոխհարուցում է դրական պահով*»¹⁹: Վազգէն Ա.ը յաճախ էր այդ ձեւով իր կարեւոր գաղափարները հասցնում մարդկանց մտքերին ու սրտերին: Այդպիսի մի օրինակ է 1992 Մարտի 22ին մայր աթոռում «Անիրաւ տնտեսի» առակի մասին խոկման ժամանակ ասուած քարոզը, որի ժամանակ վեհափառն ասում է. «*Աշխարհի որդիները՝ սովորական մարդիկ, ընչաքաղց են, եսամոլ եւ դրամասէր: Սակայն, Յիսուս պարզամում է մեզ չհեղեւել այդ անիրաւ տնտեսի օրինակին՝ դառնալու համար լուսոյ որդիներ, ազնիւ մարդիկ...*»: Այս խօսքից յետոյ վեհափառը դադար է տալիս ասուածի կարեւորութիւնը ցոյց տալու համար: Մինչ քարոզի այդ պահը վեհափառը ներկայացնում է անետարանական հատուածը, իսկ այդ երկու նախադասութեամբ ներկայացնում է ամբողջ առակի հիմնական իմաստը: Տրում է խորհրդաւոր դադար, որպէսզի մարդիկ, հասնելով առակի իմաստային գագաթնակէտին, մի պահ կանգ առնեն եւ իրենց հարց տան, արդեօք իրենք այս աշխարհի՞ որդի են, թե՞ լուսոյ որդի, եսամոլ դրամասէ՞ր են, թե՞ ազնիւ մարդիկ: Արտասանուած նախադասութիւնից յետոյ վեհափառը խօսքի դադարով ներկաներին յուշում է, որ այն ասուածի նշանակութեան մասին խորհելու համար է:

Ընդհանրապէս ելոյթներում հանդիպում են բնախօսական, չնախատեսուած, տրամաբանական եւ հոգեբանական դադարներ: Բնախօսական դադարները պայմանաւորուած են անձի խօսելու կարողութեան եւ առանձնաշարժութիւնների հետ: Չնախատեսուած դադարներ առաջանում են յատկապէս յանպատրաստից խօսքի ժամանակ, երբ առաջանում է մտքերի ընտրութեան եւ նախադասութեան ձեւակերպման խնդիր: Տրամաբանական դադարները անհրաժեշտ են արտայայտութիւնների ճիշտ շեշտադրման եւ իմաստի համար: Այն խստաճը մասնատում է տրամաբանական մասերի²⁰ եւ թէպէտ մեծ մասամբ համընկնում է քերականական դադարի հետ, սակայն մտքի հետ կապուած կարող է քերականական դադարից տարբեր-

¹⁸ Նոյն, էջ 206:

¹⁹ J. Vitanza, *Negation Subjectivity and the History of Rhetoric*, New York State University Press, 1917, էջ 235:

²⁰ Н. Н. Сурин, *Риторика* (Հռետորութիւն), ՄՊԱՀ հրատ., Մոսկուա, 2007, էջ 104:

ուել իր տետոլութեամբ²¹: Վազգէն Ա.ի քարոզներում ճշտութեամբ օգտագործում էին տրամաբանական դադարները: Օրինակ՝ 1989ին մայր տաճարում խօսուած քարոզներից մէկում ճիշտ տրամաբանական դադարներով ասում է, որ Արցախի թեմի վերաբացումը կարելի է. «*Մանաանդ այս օրերին, (մէկ վայրկեան դադար) երբ ժողովուրդը հերոսական մարդ է մղում (մէկ վայրկեան դադար) ընդդէմ մահուան, (երկու վայրկեան դադար) ընդդէմ անիրաւութիւն (երկու վայրկեան դադար) եւ ընդդէմ մեղապարտութեան (երեք վայրկեան դադար)...*»²²: Նման դէպքերում ակնյայտ է դառնում նաեւ դադարի գեղագիտական արժէքը²³:

Հոգեբանական դադարը հանդիսանում է խօսքի առարկայի հետ կապուած ելոյթ ունեցողի հոգեկան ապրումների պատճառով խօսքի կարճատեւ ընդհատումը: Հռետորի համար կարելի է տարբեր զգացումներ եւ ապրումներ փոխանցելու եւ լսարանի ուշադրութիւնը խթանելու կարողութիւնը²⁴, որոնցով արտայայտում է հռետորի հոգեկան լարուածութիւնը եւ ունկնդիրները զգում են նաեւ անձին մտահոգող, բայց չարտասանուած մտքերը²⁵: Վազգէն վեհափառի խօսքում ակնառու են հոգեբանական դադարները: Դրանք բազմահոգս կաթողիկոսի խորը ապրումների արտացոլումն են: Օրինակ՝ այդպիսի մի դադարի հանդիպում ենք 1988ի արցախեան շարժման առիթով ողջ ժողովրդին հասցեատրուած հեռուստատեսային ուղերձում. «*Ես վերջին անգամը լինելով, դիմում եմ ձեզ՝ բոլորի՛դ, իմ աղերսով, իմ պարգամով. եթէ ինձ չլսէք, (երկու վայրկեան դադար) եթէ ինձ չլսէք, ես՝ ձեր հայրապետը, կ'անհծե՛մ իմ ճակատագիրը եւ այլեւս, յաւիտէ կը լռեմ (դադար, որ տեսւմ է չորս վայրկեան)»*²⁶: Չորս վայրկեան դադարը շատ երկար

²¹ Ս. Արեւշատեան, *Հռետորական արուեստի հիմունքները*, Հայպետուսմանկ հրատ., Երեւան, 1961, էջ 76:

²² Շողակաթ հեռուստաընկերութեան «Վազգէն Ա. Ամէնայն հայոց կաթողիկոս» վերնագրով տեսանիւթ:

²³ H. F. Plett, *Literary Rhetoric. Concepts-Structures-Analyses*, München, Brill Pub., 2000, էջ 135:

²⁴ Е. В. Гвоздева, *Русский язык и культура речи* (Ռուսաց լեզուն եւ խօսքի մշակոյթը), ՄՊԱՀ հրատ., 2008, էջ 73. նաեւ՝ М. В. Колтунова, *Язык и деловое общение. Нормы, риторика, этикет* (Լեզուն եւ գործնական հաղորդակցութիւնը. նորմեր, հռետորութիւն, վարուելակարգ), Էկոնոմիկա հրատ., Մոսկուա, 2000, էջ 270:

²⁵ Վ. Միրզոյեան, *Ճարտասանութիւն*, ՎՄՎ-Պրինտ, Երեւան, 2012, էջ 324:

²⁶ Այս հատուածի վերաբերեալ իր յօշորում Կապուտիկեանը պատմում է (Մադոյեան, էջ 240), սակայն բանաստեղծուիին վերարտադրում է Վազգէն Ա.ի խօսքը իր վրայ թողած ազդեցութեան համաձայն: Հատուածի մասին նաեւ իր յօդուածում գրում է լեզուաբան Ա. Գալստեանը (Ա. Գալստեան, «Վազգէն Ա. հայրապետի կերպարակերտման լեզուաոճական դրսետրումները յուշային դիմանկարներում», *Էջմիածին ամսագիր*, 2013:Ե, էջ 58), սակայն այդտեղ եւս խօսքը ներկայացուած է փոփոխութիւններով: Տարակարծութիւնից խուսափելու եւ վեհափառի խօսքի ո-

է թուում այդ խօսքում ու աննկարագրելիորէն բարձրացնում է լարուածութիւնը: Այդ դադարը ներկայացնում է Վազգէն կաթողիկոսի խոր ապրումները, մտահոգութիւնը եւ ամբողջ հոգեվիճակը: Այդ ելոյթի ընթացքում դադարի ամէն մի վայրկեանն աւելի էր ներագրում մարդկանց վրայ, քան խօսքերը, որովհետեւ դադարի ժամանակ կարծես նրա ապրումները համակում էին ժողովրդին ու դառնում այնքան զգալի, որ ունկնդիրները սպասում էին, թէ երբ պիտի աւարտուէր այդ դադարը, որպէսզի իրենք դուրս գային չափազանց ծանր ապրումներից: Հենց այդպէս ազդեցիկ լինելու պատճառով էլ վեհափառի չորս վայրկեան տեսողութեամբ դադարը թուում էր բաականին երկար եւ անգամ տարիներ անց էլ վառ կերպով մնացել է բազում ունկնդիրների յիշողութեան մէջ: Պատճառը ազգասէր հայրապետի մտահոգութիւններն էին սեփական ժողովրդի համար:

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Լսարանի համապատասխանութեամբ հետաքրքրական կերպով օգտագործում էին նաեւ հռետորական հարցերը: Օրինակ՝ 1979 Մայիսի 24ին Համբարձման տօնի առիթով Փարիզի հայոց մայր եկեղեցում խօսուած քարոզում վեհափառը նշում է, որ խօսքը յատկապէս եկեղեցում հաւաքուած շատ մանուկների համար է, ուստի բաականին պարզ ձեակերպումով հարցնում է. «*Դուք ալ քրիստոնեաներ էք, չէ՞*»²⁷: Ընդհանրապէս խօսքի այս հնարքը սահմանում է որպէս հարց, որը չի փնտռում տեղեկութիւն: Յաջող խօսքի տարբեր մասերի շարքում հռետորական հարցը պէտք է կրի ուժեղ ազդեցութիւն եւ լինի խօսողի ակնյայտ պատասխանը²⁸: Յաջող հռետորական հարցերը նախ ծագում են լսարանի մօտ, որոնք ելոյթ ունեցողը կոահելով կիրառում է եւ հրաւիրում ունկնդիրների ուշադրութիւնը ու հաստատում իր մտքերը²⁹: Ոճական այս ձեւը բաժանում է չորս մասի. - հարցական-հռետորական, հարցական-մղիչ, հարցական-ժխտող եւ հարցական հաստատող: Հարցական-հռետորական հարցերի միջոցով փոխանցում է խօսքի առարկայի նկատմամբ հռետորի վերաբերմունքը: Փոխանցում են այնպիսի զգացումներ ինչպիսիք են՝ ուրախութիւնը, տխրութիւնը, կասկածանքը եւն.: Այդպիսի հարցի կիրառութեան հանդիպում ենք օրինակ՝ 1957 Փե-

զին հնարատրինս ճիշտ ներկայացնելու համար, *Շողակաթ* հեռուստաընկերութեան արխիւում գտել ենք տեսաժապաւէնը ու նոյնութեամբ ներկայացրել խօսքը:

²⁷ Վազգէն Ա. *կաթողիկոս ամէնայն հայոց*, էջ 90:

²⁸ H. Rohde, *Rhetorical Question*, San Diego, California University Press, 2006, էջ 149:

²⁹ В. Виноградова, *Вопросы культуры речи* (խօսքարուեստի հարցեր), Աստ հրատ., Մոսկուա, 2009, էջ 329. նաեւ՝ Х. Леммерман, *Учебник риторики. Тренировка речи с упражнениями* (Հռետորութեան դասագիրք. Խօսքի ուսուցում վարժութիւններով), NLP-Book, Մոսկուա, 1999, էջ 60. նաեւ՝ Д. Вайсман, *Блестящая презентация. Как завоевать аудиторию* (Փայլուն ներկայացում. Ինչպէ՞ս գրաւել լսարանը), Լիտմէս հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2011, էջ 38:

տրուարի ծին Ս. Էջմիածնի մայր տաճարում Մեծ պահքի առաջին հսկման առիթով Վազգէն Ա.ի քարոզում. «Միթէ՞ չեւ եւս ունիս հաւատ»³⁰:

Հարցական-մղիչ հարցերը անհրաժեշտ են հոռետրութեան հիմնական նպատակներից մէկի՝ գործի կոչելու համար: Այսպիսի հարց վեհափառը հնչեցնում է 1983 Փետրուարի 10ին վեհարանի հանդիսութիւնների սրահում Վարդանանց տօնի առթիւ ասուած խօսքում: Նախ խօսւում է Վարդանանց հերոսամարտից մեզ փոխանցուած պատգամի մասին ապա, ասում. «Վարդան Մամիկոնեանը իջաւ պատերազմի դաշտ եւ զոհուեց: Ի՞նչ բանի համար զոհուեց»³¹: Այս կերպով կոչ է արւում սրբութեամբ պահել այն, ինչի համար զոհուեցին Վարդանը հազարհարիւրերեսունվեց քաջորդիները: Այսինքն, ամուր պահել մեր հաւատը, հայրենիքը եւ ազգային ինքնագիտակցութիւնը:

Հարցական-ժխտող հարցերը ծառայում են յուզական կերպով ցոյց տալու գործողութեան, դէպքի կամ վիճակի անհնարինութիւնը: Այդուհանդերձ այդ հարցերի կառուցուածքում չկան ժխտական բառեր: Վազգէն Ա.ի կողմից այդպիսի հարցի կիրառութիւն տեսնում ենք 1977 Ապրիլի 10ին մայր տաճարում Յարութեան տօնի առթիւ խօսուած քարոզում: Այստեղ վեհափառը հարցը տալիս է օգտուելով *Ղուկասի Աւետարանի* ԻԴ.6 հատուածից. «*Հի՞ խնդրէք զկենդանիս ընդ մեռեալս*»³²:

Հարցական-հաստատող հարցերը ընդունւում են որպէս հաստատում՝ անխուսափելիութեան նրբերանգով: Դրանք հաստատում են մինչ այդ պահը ասուած խօսքը: Հարցի այս ձեւի կիրառութեան հանդիպում ենք 1970 Յունուարի վեցին Ս. Ծննդեան տօնի առիթով Վազգէն Ա.ի քարոզում: Խօսելով մեր իրականութեան մասին ասում է. «*Մեր օրերու մարդը տակաւին հեռու է հաւատարիմ մնալէ իր ճշմարիտ կոչումին, իր ճշմարիտ առաքելութեան: Հեռու է կատարելապէս Աստուծոյ որդին ըլլալէ, եւ իր նմանները բոլոր, իբրեւ իր հարազատ եղբայրներ դաւանելէ: Այլապէս ինչպէ՞ս հնարաւոր պիտի ըլլար Վիերնանի սպանողը*»³³: Այստեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս է վեհափառի հարցը ապացուցում ասուածը:

ԶԱՅՆԻ ԱՐՇԵՍՏԱՎԱՐԺ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Ելոյթների ժամանակ առաջնային դեր է գրաւում ծայնի ճիշտ կիրառութիւնը, որը առաջին հերթին լսարանի համար դիւրընկալելի է դարձնում խօսքը³⁴: Զայնի բարձրութեան լաւ կառավարմամբ փոխանցւում են հզօր

³⁰ Ա. Հատիտեան, *Վազգէն Ա. հայրապետ հայոց*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958, էջ 210:

³¹ *Վազգէն Ա. կաթողիկոս ամէնայն հայոց*, էջ 60:

³² Նոյն, էջ 76:

³³ Նոյն, էջ 56:

³⁴ G. A. Olson, T. W. Taylor, *Publishing in Rhetoric and Composition*, New York State University Press, 2007, էջ 93. նաեւ՝ Բ. Бердербер, К. Бердербер, *Психология*

զգացումներ³⁵, իսկ դրա հնչեղության փոփոխությունը, տեմպը, ուժգնությունը եւ ելեւելումը արդիւնաւետ միջոցներ են լսարանի ուշադրութեան կենտրոնացման համար³⁶: Ձայնը Վազգէն Ա.ի կողմից օգտագործում էր արհեստավարժօրէն: Նրա ձայնն առանձնանում էր կայունութեամբ եւ երկար ժամանակ լարումին դիմանալու կարողութեամբ: Անգամ երկար քարոզներում մենք ոչ մի հատուածում ձայնի թուլացում չենք նկատում: Եւ դա այն դէպքում, երբ Վեհափառը քարոզների ժամանակ խօսում էր բարձր հնչերանգով: Հայրապետի ձայնը պարզ էր, յստակ, հեշտութեամբ ընկալելի ունկնդիրներին, ունէր միջին տեմպ եւ շատ ազդեցիկ էր: Քարոզի ընթացքում ձայնն ուղղում էր եկեղեցու տարբեր կողմերում եղող մարդկանց, եւ ստեղծում էր այն տպաւորութիւնը, որ վեհափառը առանձին-առանձին խօսում էր իրաքանչիւրի հետ: Նրա ձայնը լի էր եռանդով, եւ դա արտացոլում էր ժրջան հայրապետի ներքին եռանդը: Վազգէն Ա.ի ձայնում զգացում էր իր մտքերին հետեւելու հրաւեր:

Վազգէն Ա.ը ձայնի բարձրացման միջոցով իր քարոզներում ազդեցիկ շեշտադրումներ էր կատարում: Նման շեշտադրումներ կարող ենք տեսնել 1990 Մարտի 31ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հիմնօրհնէքի առիթով խօսուած քարոզում: Վեհափառը քարոզի սկզբում, որպէս բնաբան ընտրում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականից օրուայ խորհրդին համապատասխանող մի հատուած եւ յետոյ բացատրում այն ժողովրդի համար. «Եկէ՛ք կառուցենք, լուսոյ սուրբ խորանը՝ այսինքն եկեղեցին, որովհետեւ նրանից ծագեց մեզ լոյս Հայաստան աշխարհի վրայ»: Այս կոչը ուղղուեց մեր ժողովրդին առաջին անգամ, մեզանից 1700 տարի առաջ 301 թ., երբ այն ժամանակուայ Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում հիմքն էր դրում առաջին հայկական եկեղեցոյ»³⁷: Քարոզի այս հատուածում վեհափառը ձայնի բարձրացմամբ շեշտում էր հրաւերի կոչ անող «Եկէ՛ք» եւ այդ օրուայ խորհրդի մէջ գտնուող մարդկանց պատմութեան խորքերը տանող «առաջին» բառերը:

общения (Հաղորդակցման հոգեբանութիւն), Օլմա հրատ., Մոսկուա, 2003, էջ 62. նաեւ՝ Է. Ա. Бакушева, *Секреты ораторского мастерства. Мудрые советы 22 самых известных и ораторов 20 века* (Հռետորական վարպետութեան գաղտնիքները. Իմաստուն խորհուրդներ 20րդ դարի 22 ամենայայտնի եւ յաջողակ հռետորների կողմից), ՆՊԱՀ հրատ., Միւսկ, 2003, էջ 175:

³⁵ G. A. Kennedy, *Aristotle on Rhetoric. A Theory of Civic Discourse*, Oxford University Press, 2007, էջ 195:

³⁶ Օ. Ա. Баева, *Ораторское искусство и деловое общение* (Հռետորական արուեստ եւ գործնական հաղորդակցութիւն), Մոսկուա, 2000, էջ 106:

³⁷ Քարոզի նիւթը ուսումնասիրել ենք *Շողակաթի* արխիւներում պահպանուած տեսանիւթի միջոցով: Այն մեզ հնարաւորութիւն է ընձեռել հետեւելու քարոզի ընթացքում Վազգէն Ա. կաթողիկոսի ձայնի ընթացքին եւ օգնել քարոզը բառացի վերարտադրելու գրաւոր:

ՀԱՅԵԱՅՔԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

«Աչքերի միջոցով փոխանցում են մարդկային հաղորդակցության ամենաճշգրիտ եւ բաց ազդակները»³⁸: Այդ պատճառով հայեացքը կարելի է դերակատարում ունի հոգետրական արուեստում, որով լսարանի եւ հոգետրի միջեւ ստեղծում է կապ, ինչի միջոցով էլ փոխանցում է վերջինիս ներշնչումն ու ոգեւորությունը³⁹: Հոգեբանների եւ փորձագետների կարծիքով որքան յաճախ է հոգետրը նայում լսարանին, այնքան աւելի բարձրակարգ, փորձառու, ազնիւ եւ ընկերասէր են համարում նրան, իսկ իրենց զգում են աւելի գնահատուած⁴⁰: Շատ ազդեցիկ էր Վազգէն Ա. հայրապետի հայեացքը, այն լի էր յոյսով, որով ոգեշնչում էր ողջ հայությունը: Նրա դէմքի վրայ արտացոլում էր ներքին խաղաղությունը: Եղիշէ արք. Կիզիրեանը Վազգէն Ա.ի մասին իր յուշերում գրում է. «Իր դէմքէն բարութիւն կը ճառագէր»⁴¹: Նրա հայեացքը նոյնիսկ առանց բառերի ի վիճակի էր խօսել մարդկանց սրտերի հետ: Այդպիսի մի օրինակ է մայր տաճարում՝ 1992 Մարտի 22ին խոկումի ժամանակ, «Անիրաւ տնտեսի» առակի մասին խօսուած քարոզը, որի ժամանակ կարծես առակի ամէն մի հատուած եկեղեցում տեղաբաշխուած խմբերից մէկին էր բացատրում: Այդ ձեւով բոլոր ներկաները մնում էին վեհափառի հայեացքի ներքոյ, իսկ ժողովուրդը երկիւղածութեամբ հետեւում էր նրան: Այս քարոզի ընթացքում ներկաների իւրաքանչիւր խմբին Վազգէն Ա.ը իր հայեացքն ուղղում էր 2-6 վայրկեան տեւողութեամբ: Այդ ձեւով նրա հայեացքը երկար չէր կենտրոնանում միեւնոյն մարդկանց վրայ, եւ մարդիկ իրենց անհանգիստ ու անյարմար չէին զգում:

Ելոյթին հետեւողների հետ կապի ժամանակահատուածի տեւողութիւնը կախուած է ելոյթ ունեցողի ֆիզիկական առանձնայատկութիւններից, եթէ ելոյթ ունեցողին բնութիւնը շնորհել է մեծ եւ արտայայտիչ աչքեր, ապա ունկնդրի հետ կապ հաստատելու համար կարճ ժամանակն էլ է բաւական: Այդ պատճառով էլ Վազգէն Ա.-ն ժողովրդի հետ կապ հաստատելու համար շատ կարճ ժամանակ էր անհրաժեշտ, բաւական էր անգամ 2 վայրկեան տեւողութեամբ հայեացքը: Կիզիրեան արք.ն է Վազգէն Ա.ի մասին իր յուշե-

³⁸ П. Алан, *Язык и телодвижения. Как читать мысли окружающих по жестам* (Լեզու եւ մարմնի շարժումներ. ինչպէս կարդալ շրջապատող մարդկանց ժեստերի միջոցով), Բոմբոռա հրատ., Մոսկուա, 2003, էջ 94:

³⁹ Шипунов, էջ 67:

⁴⁰ Е. П. Ильин, *Психология общения и межличностных отношений* (Հաղորդակցութեան եւ միջանձնային յարաբերութիւնների հոգեբանութիւն), 2013, Սանկտ Պետերբուրգ, էջ 278. նաեւ՝ И. А. Стернин, *Понятие риторики из истории риторики* (Հոգետրութեան մասին գաղափար. հոգետրութեան պատմութիւնից), Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 40:

⁴¹ Վազգէն Ա. *Կաթողիկոս ամէնայն հայոց*, էջ 120:

րում գրում. «Լուսաւոր ապայծառ աչքերուն մէջ՝ Ս. Լուսաւորչի կանթեղին անշէջ յոյսը կը վառէր»⁴²:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հռետորական արուեստի տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելով Վազգեն Ա. երանաշնորհի հայրապետի խօսքը, յանգեցինք այն եզրակացութեան, որ ելոյթների ընթացքում հնչած նրա ամեն մի խօսքը, հայեացքը, շարժումը ունէր յատուկ նպատակ: Վազգեն Ա.ը բարձր մակարդակով տիրապետում էր հռետորական արուեստին եւ արդիւնաւէտ կիրառում էր այն իր քարոզներում: Քարոզներում ընդգծում էին նրա հեղինակութիւնը եւ համայն հայ ժողովրդի հոգեւոր հոր կերպարը: Էթոսի եւ պաթոսի տեսակետից քննութեամբ տեսնում ենք, որ քարոզներում արտայայտուող մտքերն ու ապրումները զուտ գաղափարներ ու ցուցադրուող յոյզեր չէին: Դրանք միախառնուած էին հայրապետի էութեանը, կազմում էին իր կեանքի մի մասը եւ համարում յոյս՝ խաւարի, տագնապի եւ նեղութեան մէջ գտնուող ժողովրդի համար: Վեհափառի ելոյթների դադարների ժամանակ ժողովուրդը վերապրում էր ներկայացուած պատումներն ու գաղափարները, իսկ տրուած հռետորական հարցերով կլանում էր ունկնդիրների ուշադրութիւնը, առաջ էին բերում նպատակային մտորումներ եւ հաստատում հնչած խօսքերը: Վազգեն Ա.ի ձայնը դիւրնկալելի էր, յստակ եւ հզօր, իսկ հայեացքը խորն էր, խաղաղութեամբ ու յոյսով լեցուն: Դրանց միջոցով ներկաներից իւրաքանչիւրը զգում էր, որ վեհափառը անձնապէս դիմում է իրեն: Վերոնշեալ գործոնները դարձնում էին Վազգեն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի խօսքը այդքան հզօր եւ ազդեցիկ:

THE USE OF RHETORICAL METHODS IN THE SPEECH OF CATHOLICOS VAZGEN I

(Summary)

HAYKARAM HAKOBYAN (haykaramhakobyan@mail.ru)

Based on the study of a number of speeches and sermons given by the late Catholicos Vazgen I, the article discusses the use of rhetoric and examines the secret of the powerful influence of his speech. Furthermore, in order to have a better understanding of the rhetorical skills of Catholicos Vazgen I, unrecorded verbal information as well as memoirs provided by people who had come in contact with the Catholicos have also been used. These are underpinned by relevant concepts of psychological, rhetorical theory and literature.

The study notes that the late Catholicos successfully used different rhetorical techniques like historical context, ethos, and pathos as well as influential pauses to focus the audience and give it time to ruminate. He skillfully used his voice, his gaze, and different types of rhetorical questions.

⁴² Նոյն, էջ 121: